եալ որոտմունքն և կայծակքն. բայց մինչ յառաւօտս կայր և լինէր, բայց ոչ նման գիշերոյս։ Եւ ի տունս ոմանց ելեալ անօրինաց՝ զտանիսն ծակեալ և ի ծառայսն և յայլոցն ի մարդ ոչընչացուցեալ. և ի Հօճա փաշայի մզկթի մնարայէն իջեալ, զգլխոյ արճիճն հալելով և ուռուցեալ մինչ ի հիմն ճայթեցուցեալ։ Եւ ի մէջ մզկթին այր մի ընկողմնեալ ի քուն լինելով՝ թագաւորի ծառայ, որ պալթաճի կոչիւր, զնա եւս անդ սատակեցուցեալ ի տեղին անշարժ, ընդ որ անկեալն է, սեաւ քթեթ առնելով ի փառս չարին. յորմէ փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած մեր յամենայն պատուհասից և պատահարաց բարեխօսութեամբ Մօր սրբուհոյն և ամենայն հաճոյացելոցն առ ինքն. ամէն։

Դշիս (25 Յ--Լ-) Պայրամ Տաճկաց։

Ուրբաթ օրս (27 Յ--Լ-) զաւուխճի տղայք Հայոց ընկերակցութեամբ երթան ծովով ի խմել, և ի գալն՝ քանզի և այլ են արբեալք, ի մէջ նաւին երգաւք պարեն և խաղան անառակութեամբ կաքաւելով հանգոյն դատերն Հռոդիագայ. և մի կողմ հակեալ նաւին՝ ընկղմեալ ի ծովն եւ նոքա հեղեալ ի ծովն. եւ ոյք գիտացեալ զլողն այնու պրծին, եւ զոմանս երկաթի կարթիւ արք ծովեզերացն հանեն զնոսա խելագարեալ, բայց մինն ի նոցանէ ոչ ապրեալ՝ խեղդեալ ի ջուրս ծովահեղձ լինելով, և զնմին մեռեալ լաչան հանեն ի ծովէն հայրն և մայրն և տարեալ թաղեցին ի գերեզմաներն։ Այս եղև ի խնամոցն Աստուծոյ, վասն զի ամենայն երկիր խոտորեալ յօրինացն Աստուծոյ եւ եւս կանոնի Սուրբ Լուսաւորչին մերոյ, զի հայիմք այժմ ի փառս անօրինացն եւ ցանկամք նոցա և զգնացս նոցին ուսաք ամենևիմբ[1])։ Վասն զի յետին օր էր այս Պայրամիս Տաճկաց, զի նոքա ի

1) ամենեւինք.